

ների մնացորդներ, ֆարերը նորոգութեան ժամանակ խառը դասաւորած կամ այլ տեղերից բերած. որոնցից երկուսը հետեւեալներն են.

1. . . աւ Այ ես Մամխա (Թու)  
նս միաբանեցաք. . .  
Ի: դհ. եւ խոստ  
զաւադ: Ե: շաբաթին
2. Ներսէս որդ. . .  
Ովանիսի  
տու ընծայ  
միայբանք. . .  
տուն: Ա: աւր ժ. . .  
արիչքն աւրհ.

ԾԱՆՈԹ.— Արեւելահիւսիսային անկիւնում վերջին արձանագրութիւնը «Նախավկա»ինն է (Յաւել. Ա. 70. Բ. Գիրք եր. 62):

ՅԱԻԵԼՈՒԱԾ Ա. 105.  
Բ. Գիրք. 63, 79, 92.

ԳԵՂԱՐԴ

Ժամատան հիւսիս-արեւելեան կրկնաշարկ աւանդատան պատին.

Քս ողորմեսցի Կարապետին եւ իւր ծնողացն ամէն:

Աւելի բարձր նոյն աւանդատան պատին.

1. . . Ծառայ Քի ի գեղջէ Երեւանոյ սնեալ. . . եղբայր. . . /
2. ընչից իմոց շինեցի զԲ: խորանս որ եւ. . . ոջ. . . /
3. կաթողիկէիս եւ ետու զիմ այգին որ յԵրեւան ի. . .
4. ըոց եւ սպասաւորք սորա խոստացան ի տարին: Ի: աւր ժամ. . .
5. հաւրն ճարին: Գ: իմ մաւրն Մահառ. . . ? /
6. Բ: Մխիթարչին որ խափանէ մեր մեղա. . . /
7. ջի Քի: Զ: ժամ Յոհաննու եւ Յակոբա տաւնին Թուին ՈՂԴ.

ԾԱՆՈԹ.— Մխիթարեան Ստ. 28 աւելի պակասաւոր եւ առանց թուականի:

Կարապետի երրորդ արձանագրութիւնը տաճարի մէջ Ասխաթանի (Ա. 69.) արձանագրութեան մօտ.

Քս ողորմես Կարապետին եւ իւր ծնողացն եւ եղբարց ամէն:

Վերջապէս չորրորդ անգամ տաճարից եւ Պոռչի վեմափորից հիւսիս ընկած ժայռի մէջ երկու մասից բաղկացած խցիկների դրան ճակատին.

Քս ողորմեսցի Կարապետին եւ իւր ծնողացն ամէն:\*

\*Կարապետի մի ուրիշ արձանագրութիւնը տես Յաւել. Ա. 80. Բ. Գիրք եր. 62:

ՅԱԻԵԼՈՒԱԾ Ա. 106.

Բ. Գիրք. 79.

ԳԵՂԱՐԴ

Տաճարի արեւմտա-հարաւային անկիւնի կրկնաշարկ աւանդատան դրան ճակատին, ժամատան կողմից:

Ի յանուն յիշատակ սբ Թաթէոս առաք/լ խորանիս յիշատակ Կիրակ/ոսի հաւր Դաւթին եւ մաւր:

ԾԱՆՈԹ.— Մխիթարեան եւ ուրիշները չունին:

ՅԱԻԵԼՈՒԱԾ Ա. 107.

Բ. Գիրք. 79.

ԳԵՂԱՐԴ

Նոյն աւանդատան պատին, բարձր՝ Կիրակոսի արձանագրութիւնից.

Ես մեղապարտ/ քահանայս/ . . . ան էտ/ու: Ի: դահեկան եւ սպասաւորքս/ խոստացան: Ա: աւր ժամ որ խափան/է դատի:

ՅԱԻԵԼՈՒԱԾ Ա. 108.

ԳԵՂԱՐԴ

Տաճարի արեւմտեան պատին, բարձր, ժամատան կողմից.

1. Ես տիկին Զուգայ. . . (ամուսի)ն Հասանա ետու ի սբ եկեղեցիս
2. սառին ճ եւ ի դեհկան. . . ան ի տարին: Զ: ժամ ինձ Ածածնին տաւնին որ
3. խափանէ դատի յԱյ

ԾԱՆՈԹ.— Առաջին եւ երկրորդ տողերում բազմակէտերի տեղը քարերը փոխուած են եւ առանց գրութեան:

Մխիթ. Ստ. 26: